ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՏԱԾՈՒԹՅՈՒՆ

Ս. Մ. ԹԵՎՈՍՅԱՆ, Ռաֆֆու Պերպերյան։ Փիլիսոփայական և հասարակական-քաղաքական հայացքները, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989, 290 էջ։

Ռաֆֆու Պերպերյանը այն մտածողներից է, որն ունի ընդգծված փիլիսոփայական մտածողություն ու աշխարհայացք։ Նրա հասարակական-քաղաքական, մանկավարժական, փիլիսոփայական, բարոյագիտական հայացքների մասին կարելի է գաղափար կազմել մտածողի տարաբնույթ հոդվածների, ճառերի, դասախոսությունների, մտորումների, ինչպես նաև գրախոսվող աշխատության շնորհիվ։ Այս ամենը սույն մենագրության հեղինակից՝ Ա. Թևոսյանից, պահանջել է վերլուծական և համադրական խորաթափանց միտք, փիլիսոփայական կուլտուրա, ընձեռված նյութից ուղղակի կամ անուղղակի կատարված եզրահանգումներ ու ընդհանրացումներ, որոնք մեծապես բարձրացնում են աշխատության արժեքը։

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ Պերպերյանի աշխարհայացքը, նրա հայացքները մինչ այժմ ամբողջական տեսական ուսումնասիրության չեն արժանացել, և Թևոսյանն է այն առաջին հեղինակը, որը համակարգել է այդ ամենը, տալով Պերպերյան մտածողի ու գործչի համակողմանի կերպարը։ Ուսումնասիրողը հանգել է այն հիմնարար գաղափարին, որ Պերպերյանը XIX դ. երկրորդ կեսի հայ լուսավորչական, հրապարակախոսական մտքի կարկառուն ներկայացուցիչ է, բուրժուական առաջադեմ մտածող։ Նա սոցիալական արդարության ու առաջադիմության, հասարակական-քաղաքական կյանքը մարդկային ու բարոյական սկզբունքներով վերափոխելու, ազգի ներկային ու ապագային վերաբերող իր գաղափարներով, փիլիսոփայական, բարոյագիտական ըմբռնումներով յուրովի ուղենշել է հայ հասարակական կյանքի զարգացման հետագա ընթացքը, նպաստել հայ ժողովրդի հոգևոր կյանքի վերելքին, բարոյական դաստիարակությանը, նրա ազգային ինքնագիտակցության հետագա ամրապնդմանը։ Հենց այս պատճառով, հայ հասարակական առաջադիմական իդեալների ձևավորման ու իրականացման գործում ունեցած իր դերով, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, Պերպերյանին «կարելի է դնել արևմտահայ այն գործիչների կողքին..., որոնք կիսել են Մ. Նալբանդյանի լուսավորչական գաղափարները (ազգային առաջադիմական իդեալները, հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությունը, նրա զարգացման ապահովման պահանջը—Ս. Ա.) և պայքարել դրանց իրականացման համար» (էջ 5)։

Հարգի առնելով Պերպերյան մտածողի գործունեության ողջ բազմազանությունը, հեղինակը միաժամանակ աշխատության մեջ հատուկ ուշադրություն է հատկացրել նրա գործունեության ու հայացքների առավել կարևոր կողմերին։

Աշխատությունն ունի ներածություն, չորս գլուխ, հավելված, ռուսերեն ամփոփում, օգտագործված գրականության ու աղբյուրների ցանկ։

Առաջին գլխում, տարաբնույթ կենսագրական նյութերի հիման վրա, բացահայտված է Պերպերյան հասարակական և մշակութային գործչի դերը հայ հասարակական կյանքում, ուրվագծվել է նրա ստեղծագործական հասունացման ուղին թե՛ որպես տեսաբան և թե՛ որպես խոշոր մանկավարժ։

Առավել հետաքրքրություն է ներկայացնում Պերպերյանի սոցիալ-քաղաքական և հասարակագիտական հայացքներին նվիրված գլուխը, որտեղ փաստացի հարուստ նյութի փիլիսոփայական-հասարակագիտական վերլուծության շնորհիվ հեղինակը հիմնավորել է, որ Պերպերյանը իր ըմբռնումներով, հասարակական իդեալներով ու աշխարհայացքով կանգնած է լուսավորականության, դեմոկրատիզմի ու հումանիզմի դիրքերում, որոնք բխում էին ժամանակի հայ հասարակության զարգացման ներքին պահանջներից և հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքն ու ինքնուրույնությունը ապահովելու անհրաժեշտությունից։ Ինչպես բուրժուական հարաբերությունների շեմ պաշտպան և դրանց հետ կապելով Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունը, Պերպերյանը նաև որպես իրատես ու մեծ հայրենասեր, կարծում էր, որ միայն նվաճելով քաղաքական անկախություն ու պետականություն, հայ ժողովուրդը ի վիճակի կլինի լուծել իր ճակատագիրը, ապահովել երկրի ներքին առաջադիմությունը» (էջ 197)։ Այս դիրքերից Պերպերյանը, ինչպես հիմնավորում է Թևոսյանը, հանդես է եկել հայ ժողովրդի ազգային անկախության պահանջով, սեղել է ազգային-ազատագրա-

կան շարժումների կողմնակից և իր ամբողջ գործունեությամբ նպաստել է հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության, հայրենասիրական զգացմունքների զարթնացմանը, ոգևորելով նրան ազգային անկախության համար մղվող պայքարում» (էջ 41)։

Աշխատության մեջ թեև նշված խնդիրը մանրամասն քննված չէ, սակայն առաջադրված գաղափարը ինքնին ունի պատմական և արդիական նշանակություն։ Աշխատությունում այդ գաղափարի առանձնացումը վկայում է նաև, որ հեղինակի՝ Ա. Թևոսյանի համար իմացաբանական, արժեբանական կարևոր նշանակություն ունի ուսումնասիրվող պրոբլեմների ազգային կողմնորոշվածության խնդիրը, մի բան, որը դրսևորվել է նաև Պերպերյանի մանկավարժական, բարոյագիտական հայացքների վերլուծության ժամանակ։

Պերպերյանի սոցիալ-քաղաքական, հասարակագիտական հայացքները ամբողջականացնելու, համակարգելու, դրանց բուրժուա-լուսավորական, դեմոկրատական յուրահատկությունը և մտածողի ազգային իդեալները ըմբռնելու նպատակով, հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել հասարակության պետական-քաղաքական կառուցվածքի, դեմոկրատիայի և. իրավունքի, հասարակության առաջադիմության, տնտեսագիտական որոշ խնդիրների քննությանը։

Պերպերյանի իդեալը «հասարակական-քաղաքական կառուցվածքի հարցում եղել են բուրժուական-պառլամենտական սահմանադրական կարգերը», որոնք ըստ նրա «ստեղծում են լրիվ նախապայմաններ մարդկանց բնական ու անհատական իրավունքներից բխող քաղաքական ազատությունների ու նրանց ազատ գործունեության համար» (էջ 43)։

Չափազանց արժեքավոր են, նույնիսկ արդիական չափանիշներով, Պերպերյանի մանկավարժական հայացքները։ Այս բանը, ինչպես նշում է Թևոսյանը, երևում է լուսավորության, երկսեռ դաստիարակության, դպրոցների, եկեղեցու և կրոնի, ազգի կուլտուրական օջախների, աշխարհաբարի և այլ հարցերի քննության կապակցությամբ (էջ 61)։ Պերպերյան մանկավարժի նպատակը եղել է ժամանակի և ապագայի ոգուն համապատասխանող և հայ ազգի առաջադիմությանը նպաստող նոր սերնդի, հայ մարդու, հայեցի մտածողությամբ քաղաքացու դաստիարակությունը՝ պատրաստ ծառայելու ազգին ու հայրենիքին։ Եվ մեր օրերում, երբ խորանում է բանավեճը ազգային դպրոցի վերաբերյալ և զգացվում է այդպիսի դպրոց ստեղծելու անհրաժեշտությունը, հարկ է օգտվել նաև անցյալի մեր երախտավորների, ներկա դեպքում Պերպերյանի ժառանգած առաջադիմական, իրենց կենսունակությունը պահպանած դրդապարներից, մանկավարժական փորձից, յուրացնել ու կենսագործել այն, ինչը իրեն արդարացրել է պատմականորեն ու կարող է օգտագործվել նաև ներկայումս, որովհետև ազգային դպրոցը խիստ արդիական լինելով հանդերձ, պետք է լինի նաև պատմական ու ավանդական։

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է Ռ. Պերպերյանի զուտ փիլիսոփայական հայացքներին։ Հեղինակը համոզիչ փաստերով ու տրամաբանությամբ ցույց է տալիս, որ Պերպերյանը XIX դ. վերջին քառորդի ամենանշանավոր հայ փիլիսոփաներից մեկն է, որի փիլիսոփայական հայացքները էվոլյուցիա են ապրել։ Նա իդեալիզմից անցում է կատարել կանտյան դուալիզմին, վճռականորեն քննադատելով մատերիալիզմն ու նույնիսկ իդեայիզմը։ Կանտի ազդեցությամբ Պերպերյանը հիմնականում քննել է իմացաբանական պրոբլեմներ։ Ուսումնասիրելով Պերպերյանի իմացաբանական հայացքները, հեղինակը իրավացիորեն հանգել է այն եզրակացությանը, որ դրանց բնորոշ են ապրիորիզմն ու ագնոստիցիզմը։

Մենագրության վերջին գլուխը վերաբերում է Պերպերյանի բարոյագիտական հայացքներին։ Շարունակելով հայ փիլիսոփայական մտքի և եվրոպական լուսավորականության ու հումանիզմի ավանդույթները, Պերպերյանը հանդես է եկել որպես նշանավոր բարոյագետ։ Հեղինակը իրավամբ հատուկ կարևորություն է հատկացրել Պերպերյանի բարոյագիտական հայացքներին և այդ տեսակետից, փաստական, տեսական հիմնավորմամբ ապացուցել, որ հայ մտածողը այդ հարցում հանդես է եկել ոչ թե լոկ որպես տեսաբան, այլ փորձել է իր ըմբռնումները կենսագործել նաև կյանքում՝ իր իսկ վարժարանում, իր մանկավարժական գործունեության մեջ, առաջնորդվել է «բարու, գեղեցիկի, ճշմարիտի» իրականացման ու դրանց ներդաշնակ զարգացման գաղափարով։ Պերպերյանի վարժարանի նպատակն էր այնպիսի մարդկանց դաստիարակումը, որոնք «դաստիարակված լինելով բարու, ճշմարիտի և գեղեցիկի սկզբունքներով, կարողանան օգտակար լինել իրենց ժողովրդին, պայքարեն նրա բարօրության ու լավագույն ապագայի համար», եզրակացնում է աշխատության հեղինակը (էջ 12)։

Ինչպես փիլիսոփայության մեջ, այնպես էլ բարոյագիտական հայացքներով Պերպերյանը կանտական էր։ Կանտի օրինակով Պերպերյանը մարդուն համարել է ոչ թե միջոց, այլ բարձրագույն նպատակ։ Նա գտնում է, որ հասարակությունը և ազգային հարաբերությունները պետք է հիմնված լինեն մարդկայինի՝ սիրո, գութի, օգնության, փոխադարձ հարգանքի ու արդա-

թության վրա, որոնք կարելի է իրականացնել միայն սահմանադրական-պառլամենտական կարգերի պայմաններում։

Պերպերյանի այս և նման պատկերացումները նրա աշխարհայացքի ամենակարևոր մասն են կազմում, և մենագրության հեղինակը ճիշտ շեշտադրումներով ու ընդհանրացումներով համոզում է, որ հայ մտածողի բարոյագիտական պատկերացումներում յուրահատուկ ու հիմնավորված ձևով հանդես են դալիս նրա հումանիստական, մարդաբանական, հասարակական ու մանկավարժական առաջադիմական գաղափարները։ Պերպերյանը մտահոգվում էր նաև բուրժուապառլամենտական, սահմանադրական կարգերի, մարդկանց իրավունքների ու ազատությունների, մարդկային ցեղի կատարելության խնդիրներով, հակադրվում սուլթանական բռնապետության (դուցե նաև ցարիզմի) հակահայկական, հակամարդկային ու անբարոյական գործողություններին։

Աշխատությանն առանձնահատուկ փաստական, գիտաճանաչողական արժեք է հաղորդում հավելվածը՝ Պերպերյանի «Փիլիսոփայություն» աշխատության Հոգեբանություն հատվածը (էջ 221—289), որը հնարավորություն է տալիս հասկանալու հայ մտածողի աշխարհայացքի, մտածելակերպի, փիլիսոփայական, հոգեբանական որոշ ըմբռնումների յուրահատկության մասին։

Թևոսյանի աշխատությունը կարևոր ներդրում է XIX դ. հայ փիլիսոփայական տեսական մտքի ուսումնասիրության բնագավառում և միանգամայն արժանի հայ մտավորականների ու մշակութային գործիչների ուշադրությանը։

Ս. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու